Oyunun bu bölməsi ona istiqamətlənib ki, oyunçular oyunun gedişində öz hərəkətlərini uzlaşdıralar, ümumi dil tapalar və əməkdaşlıq edələr. Belə oyunlar vasitəsi ilə iştirakçılar oyun şəklində komandada fəaliyyət göstərməyin nə olduğunu, əgər kimsə kömək etməsə, nə baş verəcəyini və yaxud əgər hamı iştirak edər və razılaşırlarsa necə də yaxşı olduğunu sınaırlar. Bu, oyunçulara vəziyyəti təhlil etmək, razılaşmaq və birlikdə qərar qəbul etmək bacarığını aşılayır.

4.Təfəkkürün inkişafı və ümümtəhsil vərdişlərinin formalaşması ;

Bu bölmənin oyunları qavrayışın, yaddaşın, məntiqi və təhlili təfəkkürün inkişafına kömək edir. Oyunlar təxəyyülün, prognozlaşdırmanın, öz yaradıcılıq qabiliyyətinin açılmasının inkişafına təkan verir. Oyunların bu bölməsi həmçinin öz biliyini yoxlamaq imkanı verir.

5.Dinləmə vərdişlərinin inkişafı ;

Bu bölmənin oyunları diqqəti, dinləmə bacarığını, məndə tanış sözləri tapmağı və tapşırığa tez reaksiya verməyi inkişaf etdirir.

6.Lüğət ehtiyatının inkişafı ;

Bu bölmənin oyunları gedişində müəyyən sözlər işlədirlər. Onlar həmin sözləri ya münasib yerdə işlədir, ya da müvafiq vəziyyətdə istifadə edirlər. Ona görə də sonrakı oyunlar dil fənlərinin tətbiq olunmasına, yeni sözlərin məşqi yaxud köhnələrin təkrarına xüsusi uyğunlaşdırılır. Bu oyunların bəziləri, məsələn, təbiətşünaslıq dərslərində yeni sözlər başqa fənlərdə də tətbiq olunur.

7.Kommunikativ bacarığın formalaşdırılması ;

Bu oyunlar dinləmək və danışmaq, fikir ifadə etmək, obrazlı danışq vərdişləri yaradır.

8.Hərfləri tanımaq ;

Oyunların bu bölməsi gavrmanı inkişaf etdirir, hərfləri mənimsəməyə, oxuma və yazma vərdişlərinə yiyələnməyə təkan verir.

Oyunlar funksional – mövzular prinsipi üzrə qruplaşdırılır. Hər qrupda oyunlar

sadəcə ən mürəkkəbə doğru düzülübdir.

Kitabın hər bir bölməsi oyunların müəyyən bir qrupuna aid qısa şərhə başlayır. Həmin şərhə bu oyunların ümumi xüsusiyyətləri, əsas keyfiyyətləri və tədris prosesində tətbiq edilməsinin məqsədləri təsvir olunur. Seçilmiş oyunlardan bəzisi bir, iki, hətta üç bölməyə uyğun gəlir.

Yaş: Kitaba ibtidai sinif şagirdləri üçün dilə yiyələnmə mərhələsində nəzərdə tutulmuş oyunlar daxildir.

Vaxt: Bu yaş dövründə olan uşaqlar üçün oyunların keçirilməsində daha səmərəli vaxt 10-20 dəqiqədir. Bu ona görədir ki, uşaqların marağı itməsin və onlar yorulmasınlar.

Yer: Oyunların xüsusiyyətinə və seçilən binanın imkanlarına uyğun olaraq oyunları sınıfdə, məktəb dəhlizində, həyətdə, idman zalında təşkil etmək olar.

Oyunçuların sayı: Oyunlarda dili mənimsəmiş bütün sinif yaxud qrup iştirak edir.

Oyunları təşkil edən müəllim hər bir şagirdin oynamaq imkanını təmin edir. Əgər oyunçuların sayı kifayət qədər çoxdursa, müəllim sinfi qruplara bölə bilər və texniki imkanlara uyğun olaraq bir neçə qrupa eyni vaxtda, yaxud növbə ilə oyun təklif edə bilər, qalan vaxtda isə digər tapşırıq verə bilər. Bölmənin sonunda siz uşaqların qruplara bölünməsi üsullarını tapa bilərsiniz.

Hər bir oyunun təsviri onun tətbiq edilməsinə dair əsas məlumatı əhatə edir: məqsədlər, vacib əşyalar, oyunların təsviri, bəzi tövsiyələr və variantlar.

Bu məlumat vacib qayda kimi yox, yalnız tövsiyə olaraq qəbul edilməlidir. Bu, oyunçuların tələblərindən asılı olaraq oyunu yaradıcı surətdə tətbiq etməyə imkan verir: öz variantlarını düşünmək və oyunların keçirildiyi şəraitə uyğunlaşdırmaq olar.

Tədris təlim prosesində oyunlar

1. Tədris üçün oyunlar nə üçün lazımdır?

Tanınmış pedaqoqlar J.Piaje, C.Dyui və L.Vıqotski¹ hələ ötən əsrdə oyunları sadəcə əyləncə kimi yox, həm də uşaqların öz biliklərini, anlayış və mücərrəd təfəkkürlərini inkişaf etdirə biləcəyi mühüm mənbə, dünyanı təbii qavrama, aktiv fəaliyyət kimi əhəmiyyətini qeyd etmişlər. Müasir psixologiya isə xüsusilə qeyd edir ki, tədris prosesində oyun əslində uşaqlara dünyanın qavranılması və öyrənilməsi üçün lazım olan əqli işdir.

Xüsusilə Piaje yazırdı:

“Böyük pedaqoqların mütərəqqi baxışlarına baxmayaraq, ənənəvi metodikada oyun həmişə uşaqlara tapşırıqların yerinə yetirilməsində maneə törədərək

*Yaxşı pedaqoq
uşaqların dünyanı
sərbəst qavraması
imkanlarını
dəstəkləyir*

1. bax: **Piaget, J.** *Play, dreams, and imitation in childhood.* New York, 1945.

Dewey, J. *How we think: A restatement of the relation of reflective thinking to the educative process.*

Lexington, 1933. Dewey, J. *Interest and effort in education.* Edwardsville, 1913.

Dewey, J. *The school and society.* Chicago, 1915. Vygotsky, L. “Play and its role in the mental development of the child.” *Soviet Psychology vol. 12, 1966.*

zərər verən, funksional əhəmiyyəti olmayan yalançı fəaliyyət və «əqli» zir-zibil hesab olunurdu». (Jean Piaget: Play, dreams and imitation in childhood. 1945/1962:151)

İndiyədək bir çox məktəblərdə və uşaq bağçalarında tez-tez dərslərdə qiymətli vaxt «itkisi» qorxusu yaranır və pedaqoqlar oyunların tətbiq edilməsindən imtina edirlər. Onlar özlərinə belə bəraət qazandırırırlar ki, vaxtları azdır və proqramlar doldurulub. Belə fikirlər göstərir ki, oyunların pedaqoji dəyəri onlara məlum deyil, həmçinin onların tədris prosesinə bütöv şəkildə qoşulması üçün oyunların necə tətbiq oluna bilməsi onlara aydın deyildir.

*Oyun vasitəsilə digər
üsulla öyrənilə bilməsi
mümkün olmayan bəzi
vərdişləri öyrənmək
olar*

Amma uşaqlara hər hansı bir rəhbərlik olmadan sadəcə oynamaq imkanının verilməsi kifayət deyil. Uşaqlara tam sərbəstlik və sadəcə oynamaq imkanının verilməsini təklif edən pedaqoqlar (maturasionistlər) tədris üçün oyunların üstünlüyünü düzgün şərh etmirlər. Axı oyuna hər hansı bir informasiya daxil etmədən sadəcə oyuncaqlarla oynamaqla uşaqların savadlı olmasına nail olmaq mümkün deyil. Belə yanaşma tədris prosesinin şagirdlərin hərəkətləri ilə idarə edilmə və planlaşdırılmanı tələb etməsini nəzərdə tutmur. Səmərəli tədris sənəti ənənəvi metodikanın təklif etdiyi tam idarə edilmə ilə maturasionistlərin² tam azadlığı arasındakı orta q məxrəcin tapılmasıdır.

*Oyun vaxt itkisi
deyil, əksinə təhsilin
ən səmərəli üsuludur*

Uşaqların dünyanı sərbəst qavrama imkanını əldə etməsi, eyni zamanda pedaqoqun dəstəyi və idarə etməsi ilə olan yanaşma konstruktivizm fəlsəfəsinə aiddir. Bu, “yeni metodika”da müxtəlif adlar altında öz əksini tapır: interaktiv metodika, kommunikativ metodika yaxud uşaqlara yönəldilən metodika. Yeni metodikada oyunun tam yeri vardır və bu oyun təkcə məktəbəqədər yaş dövründə olan uşaqlar üçün deyil, həm də bütün yaşlarda olan şagirdlər üçün nəzərdə tutulub.

Oyun ictimai, emosional, yaradıcı və fiziki vərdişləri inkişaf etdirir. Oyun vasitəsilə uşaqlar ünsiyyət qurmağı, qərar qəbul etməyi, müəyyən qaydalara riayət etməyi, özünə nəzarət etməyi, başqaları ilə əməkdaşlıq etməyi, onların fikirləri ilə hesablaşmağı, onların tələblərini nəzərə almağı və onlara hörmət etməyi, özünü ələ almağı, başlanılmış işi başa çatdırmağı öyrənirlər.

Bugünkü həyatımızda belə qabiliyyətlərə malik olmaq çox vacibdir və bunları oyun vasitəsilə əldə etmək olar. Belə ki, oyunlarda yalnız bu qabiliyyətlərin dəyərləri haqqında danışılmır, həm də bunların əməli tətbiqi aparılır.

Oyunların düzgün təşkili dərsin mahiyyətini qavramaq üçün mühüm amildir. Oyunların məşğələlərə daxil edilməsi uşaqların maksimal fəallığıni təmin edir. Çünki oyun – uşaqların davranışlarının daha təbii formasıdır. Oyun əlverişli, emosional şəkildə məna ifadə edən formaya ciddi məzmun vermək imkanı yaradır. Məşğələlər zamanı təşkil olunan oyunlar uşağın vərdiş etdiyi oyunlardan çox fərqlənir.

*Suallar
verməklə,
təhlil etməklə,
özünü etdiyi
səhvləri özü
düzəltməklə
öyrənmək olar*

Dərstdə keçirilən oyunlarda sərbəst hərəkətlər azalır və əqli yük artır. Bu zaman oyunun əsas keyfiyyətləri və mahiyyəti itmir, əməkdaşlıq ruhu saxlanılır.

2. Bu söz Kolberq və Mayer tərəfindən işlədilmişdir və belə bir təsəvvür yaradır ki, uşaq hər şeyi sərbəst oyunda pedaqoqun yaxud valideyinin idarəsi olmadan öyrənir. (Kohlberg, Mayer. „Development as the Aim of Education“. 1972)

Oyunlar keçilənləri təzədən dərk etməyə kömək edir, keçilmiş materialı sistemli şəkildə təkrar etməyə və məhkəmlətməyə imkan verir.

Topluda təklif olunan oyunlar uşağın nitq fəaliyyətinin və marağının stimullaşdırılması üçün nəzərdə tutulub və uşağın inkişaf səviyyəsinə uyğundur.

Oyunların yuxarıda adı çəkilən üstünlükləri nəzərə alınmaqla aydın olur ki, dərstdə oyunlara sərf olunan vaxt itirilmiş vaxt deyil, əksinə, oyunlar vasitəsilə daha səmərəli öyrətmək mümkündür.

2. Interaktiv, kommunikativ metodika nədir?

Təhsilin interaktiv metodikası tədrisin konstruktivlilik psixologiyasına əsaslanır. Yəni bu, o faktı nəzərdə tutur ki, bilik və vərdişlər təkcə müəllimdən şagirdə hazır məlumatın ötürülməsi vasitəsilə deyil, həm də “fərdi yaradılmış biliklər” vasitəsilə mənimsənilir. Hər bir insan öz biliklərini özünün müxtəlif mənbələrdən topladığı, həmçinin şəxsi təcrübəsindən əldə etdiyi məlumatlar vasitəsilə “təşkil edir”. Belə fəal və sərbəst təlim biliyi düşünülmüş şəkildə əldə etməyə səbəb olur və şagirdlər sadəcə əşyanı tanımayacaq, eyni zamanda onun mahiyyətini dərk edəcəklər. Şagird yeni məlumatı daha yaxşı yadda saxlayacaq və alınan bilikləri başqa yerlərdə və məktəbdənkənar şəraitdə tətbiq edə biləcəklər. Yəni, şagird özü tədris prosesinə nə qədər çox qoşulsa, bir o qədər yaxşı nəticələr əldə edəcəklər.

Sübut olunub ki, biz:

eşitdiyimizin 20%-ni,

gördüyümüzün 30%-ni,

özümüzün səy etdiyimizin, qısa və düzgün ifadə etdiyimizin 80%-ni,

özümüz etdiyimizin və müəyyən etdiyimizin 90%-ni yadda saxlarıq.

Təcrübədə bu, onu göstərir ki, şagirdlər tədris prosesinin bütün səviyyələrində əsas rol oynayır: müəllim mövzu və iş növünün seçilməsində onların tələb və maraqlarını nəzərə alır. Proqram isə məcburi şəkildə yox, istiqamət kimi, yəni uşaqlara uyğunlaşdırılmış plan (uşaqların plana uyğunlaşdırılmalı olduğunu nəzərdə tutan ənənəvi metodikadan fərqli olaraq) kimi tətbiq edilir. Beləliklə, məşğələlərə proqramda nəzərdə tutulmayan, amma göstərilən vaxtda uşaqlar üçün vacib olan aktual mövzular daxil etmək olar.

Interaktiv metodika fəaliyyətin müxtəlif növləri vasitəsilə səmərəli öyrənməyə imkan verir. Uşaqlar nəinki müəllimi dinləyir, həm də əyani materiallara baxırlar. Amma ən əsası isə odur ki, onlar suallar verir, problemi həll etməyə səy göstərir, səhv edir, təhlil edir, öz səhvlərini düzəldir, özlərinin gəldiyi nəticələri digər uşaqlara izah edir və bir-birləri ilə ünsiyyətdə olurlar. Müəllim uşaqlara tapşırıqlar verir və bu iş üzərində onlar Con Dyuinin (“The School and Society”, 1915:40-56) “dörd səbəb” adlandırdığı və hər bir uşaqlarda olan ünsiyyət qurmaq istəyi, müəyyən etmək istəyi, təşkil etmək istəyi və bədii özünüifadə (təkcə danışıraq yox, həm də digər üsullarla, məsələn, rəqs edərək, şəkil çəkirək yaxud teatrda oynayaraq) istəyini tətbiq edə bilər.

Bunun üçün ən əsası odur ki, müəllim uşaqların nə isə etməyi bacardığına

Pedaqoq interaktiv metodika ilə işləyərkən uşaqlar üçün sərbəst fəaliyyət növləri fikirləşir, onlara etibar edir və inanır ki, onlar bunun öhdəsindən gələcək

inansın və onlara yarımqruplarda özünün tam nəzarəti olmadan sərbəst iş imkanı versin. Uşaqlarda hələ erkən yaşlardan sərbəstlik, eləcə də özünə və başqalarına məsuliyyət hissi inkişaf edir. Interaktiv metodika ilə işləyən sınıfdə uşaqların tapşırığı düzgün yerinə yetirməsi yox, onların tapşırığın həlli üçün özünəməxsus yol axtarması, eyni zamanda problemləri və təklif olunan yolların üstünlüyünü müzakirə etməyi bacarması vacibdir. Belə sınıfdə uşaqlar bir-birləri ilə daha çox ünsiyyətdə olurlar və bu da onların ünsiyyətdə olmasına daha yaxşı təsir edir.

Bütün bunlar çətin görünür, amma əslində bu, müəllim üçün yalnız psixoloji nöqtəyi - nəzərdən çətindir. Belə ki, o, uşaqların üzərinə bu qədər məsuliyyət qoymağa adət etməyib. Müəllim bu qaydada işləməyə başlayan kimi görəcəkdir ki, uşaqlar məmnuniyyətlə işləyirlər və ona tədris etmək maraqlı olacaqdır. Müəllim görəcəkdir ki, o özü də uşaqlardan öyrənə bilər!

Interaktiv oyun interaktiv fəaliyyətin bütün tələblərini özündə birləşdirir və həm uşaqları, həm də müəllimləri tədris prosesinə yeni yanaşmağa öyrədir. Amma əslində burada yeni heç nə yoxdur. Yeni olan yalnız bu və ya digər bilik və vərdislərə yiyələnmə prosesində tam hissə kimi oyunların tətbiq olunmasıdır.

3. Interaktiv oyun nədir?

Interaktiv oyunda oyunçular bir-birləri ilə müəyyən qarşılıqlı münasibətdə olurlar. Buna görə də yeganə qeyri-interaktiv oyunlar bir oyunçunun oynadığı oyunlardır yaxud bunlar oyunçuların öncədən müəyyən hərəkətləri və ya dialoqları yerinə yetirdiyi səhnəciklərdir.

Interaktiv oyunun aşağıdakı keyfiyyətləri əhatə edir:

-bu oyunlar maraqlıdır və bu uşaqların diqqətini və iştirakını cəlb etməklə onları fəallaşdırır;

-bu oyunlarda qaydalar aydındır;

-bu oyunların məqsədi müəyyən olunub, yəni pedaqoq dərstdə oyunu məqsədəuyğun şəkildə aparır³;

-oyun zamanı uşaqların seçimi var, yəni hər bir oyunçu öz qərarı ilə oyunun gedişinə təsir edir;

-oyunçular oyun vasitəsilə nə isə öyrənirlər;

-* bu oyunlara yarışlar daxildir;

-* bu oyunlara hərəkətlər daxildir.

İlk 5 keyfiyyət interaktiv oyun üçün vacibdir, * işarəsi ilə göstərilənlər isə dəyişdirilə bilər. Bir çox interaktiv oyunlar vardır ki, burada heç kim qalib və ya məğlub olmur. Həmçinin oyunlar da vardır ki, ilk baxışda adama elə gəlir ki, burada heç nə öyrənmək olmaz, amma bu oyunlar maraqlıdır və oynamağa dəyər. Məhz bu oyunlar vasitəsilə hər şeydən öncə ictimai və emosional vərdisləri formalaşdırmaq olar.

Yarışlar, hərəkətlər və nə isə öyrənmək imkanı güclü əsaslara gətirib çıxara bilər. Xüsusilə 3 yaşdan 9 yaşadək uşaqlarda hərəkət diqqətin cəlb olunması

³ pedaqoqun məqsədi uşaqlara məlum olmaya bilər, amma bu vacib şərt deyil.

üçün qəti amil ola bilər. Ona görə ki, bu yaş dövründə tez-tez və çox hərəkətdə olmaq imkanının sağlam inkişaf üçün böyük əhəmiyyəti vardır. Yarışlar 6 yaşdan 13 yaşadək olan uşaqlar üçün xüsusilə maraqlıdır. 13 yaşdan sonra bu amil az əhəmiyyət kəsb etməyə başlayır. 9 yaşında, həmçinin daha böyük yaşda olan uşaqlar üçün oynayaraq yeni olan nəyi isə tanımaq yaxud öyrənmək olar fikri böyük əhəmiyyət kəsb edir.

4. Oyun vasitəsilə nəyi öyrənmək olar?

İnteraktiv oyun təhsilin səmərəli üsuludur, belə ki, oyun vasitəsilə eyni vaxtda müxtəlif məqsədlərə nail olmaq olar. Oyunlar dil qabiliyyətlərini və bilikləri bərpa edir, dərinləşdirir, aktuallaşdırır və möhkəmləndirir, söz ehtiyatını zənginləşdirir, yaddaşı inkişaf etdirir, diqqət və məntiqi düşüncənin inkişafına kömək edir. Musiqinin və mahnıların müşayiəti ilə aparılan oyunlar həm də dil intonasiyasına yiyələnməyə və nitqin inkişafına kömək edir.

Belə oyunların məqsədi “maraqlıdır”, belə ki, bu oyunlar vasitəsilə uşaqlar öz biliklərini artırır. Yeni sözlərin tələffüzü ilə bağlı sadə tapşırıqlar (birinci, ikinci yaxud xarici dildə) xüsusi marağa səbəb olur. Amma sözlər oyun formasında tələffüz olunursa, onda uşaqlar bu tapşırığı məmnuniyyətlə yerinə yetirirlər. Belə ki, sözlərin tələffüzü birbaşa oyunla bağlıdır, tələffüz isə oyun prosesində bir addımdır. Belə hallarda uşaqlar qorxusuz fikirləşir ki, onlar bu sözləri bilməlidirlər, yoxsa pis qiymət alacaqlar.

Beləliklə, oyun özü-özlüyündə ünsiyyətdir, uşaqlar oyun vasitəsilə ünsiyyət qurmağı və nəzakət-ehtiram qaydalarına əməl etməyi öyrənirlər. Oyun prosesində uşaqlar hiss olunmadan ictimai və emosional vərdislərə nail olurlar və bu, onların inkişafı, eləcə də müasir cəmiyyətdə sərbəst və məsuliyyətli həyata hazırlığı üçün vacibdir. Onlar müəyyən qaydalara əməl etməyi, başqa adamlarla hesablaşmağı, onların tələblərini nəzərə almağı və onlara hörmət etməyi, özünü ələ almağı, başlanılan işi başa çatdırmağı, qərarlı olmağı, özünə nəzarət etməyi bacarmağı və əməkdaşlıq etməyi və s. öyrənirlər.

Əgər müəllim oyun zamanı uşaqlarla münasibətlərini tərəfdaşlıq əsasında qurursa, onda bütün bunları oyun vasitəsilə öyrənmək olar.

5. Bütün uşaqları oyuna necə cəlb etməli?

Oyun fəaliyyət və aktivlikdir. Oyunların uşaqların əsas fəaliyyəti olması faktını nəzərə alaraq bunların düzgün təşkilinin uşaqların inkişafı üçün nə qədər əhəmiyyətli və zəruri olduğunu qeyd etmək lazımdır. Belə ki, məhz fəaliyyət vasitəsilə uşaqlar özlərinin sağlam inkişafı üçün lazım olan hər bir şeyi öyrənirlər. Qabiliyyət və marağından asılı olmadan hər bir uşağın oyuna cəlb edilməsi vacibdir. Müəllimin tapşırığı ondan ibarətdir ki, oyunun şərtlərini yaxud qaydalarını yaradıcı şəkildə uyğunlaşdırın və hətta ola bilər ki, ayrıca bir uşaq üçün xüsusi qaydalar tərtib etsin. Bu ona görədir ki, oyun hamıya maraqlı olsun və hər kəs burada iştirak etmək imkanı əldə etsin.

Uşaqların əksəriyyəti üçün oyunda qarşılıqlı təsir onların normal böyüməsi və inkişafında əsas şərt ola bilər. Amma bu, o halda müsbət nəticə verir ki, uşaqlar sıx əməkdaşlıq etsin. Uşaqların müxtəlif tələblər və imkanlarla qarşılıqlı təsiri hamıya faydalıdır, məhz uşaqlar adı inkişaf əzlərində dözümlü münasibət yarada bilər, onların əzlərindən fərqlənən (qabiliyyətləri, imkanları, xasiyyətləri, dilləri, maraqları və s. ilə) uşaqlarla ümumi dil tapa bilər.

Buna görə də oyunlar keçirilərkən müxtəlif funksional qüsurları olan uşaqları da cəlb etmək vacibdir. Bəzi uşaqlar çox fəal oyunlarda oynaya bilmir, buna görə də onlarla oturaraq oynanılan yaxud az gərginlik tələb edən oyunları aparmaq olar. Görmə qüsurları olan uşaqlar üçün, məsələn, topla oyunlarda zəngi topun içərisinə qoymaq olar ki, onlar topun hara və necə hərəkət etdiyini eşidə bilsinlər. Eşitmə qüsuru olan uşaqlar üçün qrupda oyunların musiqi ilə müşayiətinə ovucuları bir-birinə ritmik vurmanı da əlavə etmək olar. Dili hələ kifayət qədər yaxşı başa düşə bilməyən uşaqların oyununa şəkillər, hərəkətlər, mimika və təsvirlər də tətbiq etmək olar. Uşaqların oyun vasitəsilə daha cəld ikinci yaxud xarici dili öyrənməsi üçün onların birinci dilinə onlar üçün yeni və tanış olmayan hər bir sözün tərcümə etmək olmaz.

Şagirdlər dərslərdə məşğul olur, müəllim isə təşkil edir, dəstəkləyir, əsaslandırır, müşahidə edir və qiymətləndirir

Beləliklə, istisnasız olaraq bütün uşaqlar oyunda digərləri ilə bərabər fəal iştirak etmək imkanı əldə edəcək və məhz özünə lazım olan hər bir şeyi öyrənəcək.

6. Müəllimin rolu

Uşaqların yeni nə isə öyrənmə bilməsi və öyrəndiyi predmetə qarşı müəyyən münasibəti inkişaf etdirməsi üçün müəyyən mühit lazımdır. Uşaqlar verilən tapşırıq yaxud oyun çərçivəsində özünü azad hiss edə biləcəyi mühitdə sınaqdan çıxmaq, səhv etmək və müəyyən məsələnin həlli yollarını sərbəst tapmaq imkanı əldə edirlər. Belə axtarış prosesi çox vaxt tələb edir. Amma dərs materialının möhkəmləndirilməsi üçün müəllimdən ayrıca vaxt ayırması tələb olunmur. Verilən metodika şagirdə tapşırığı özü bildiyi kimi yerinə yetirmək, eləcə də müəllim yaxud digər şagirdlər tərəfindən fərdi dəstək qazanmaq imkanı verir.

Ənənəvi sınıfdə müəllimin yeganə bilik mənbəyi kimi vəzifəsi uşaqlara mümkün qədər tez biliklər verməkdir. Interaktiv sınıfdə müəllim uşaqların fəaliyyətinin təşkilatçısı olur, uşaqlar isə müxtəlif mənbələrdən (məsələn, digər uşaqlardan, insanlardan, müsahibələrdən, mətnlərdən, sərbəst qavrayışlardan və s.) biliklər alırlar.

Müəllim – təşkilatçının əsas işi dərslərin hazırlanmasıdır. O, müxtəlif fəaliyyət növləri, tapşırıqlar və oyunlar düşünür və bu vasitələrlə həmin sınıf üçün nəzərdə tutulmuş məqsədlərə nail olmaq olar. Müəllim düşünür ki, hansı uşaqlar nə vaxt və nə ilə dərslərin gedişi ərzində məşğul olacaqlar ki, onlar hamısı məşğul olsunlar və müəllim özü də onlara hər hansı bir çətin tapşırığın yerinə yetirilməsində kömək edə bilsin. Müəllim öncədən planlaşdırır ki, dərs zamanı hansı uşaq onun köməkçisi ola bilər. Bir qayda olaraq, bu uşaqlar digərlərinə nisbətən daha tez qavrayan və işləyən, təhsilin dilini yaxşı bilənlərdir. Dərs zamanı müəllim yalnız uşaqları təşkil edir və məsləhət görür ki, nə, necə, nə vaxt və kiminlə görülən işi

həyata keçirmək olar və özü də çətinliklərin olduğu yerdə kömək edir. Ənənəvi metodikadan interaktiv iş növünə keçidin çətinliyi onunla əlaqədardır ki, müəllim uşaqlara münasibətini dəyişməlidir. O, uşaqda maraq yaratmaqla onları təhsilə yönəltməlidir. Bunun üçün müəllim uşaqlara münasibəti ciddi qəbul etməli, onları dinləməli və onlarla böyüklərlə olduğu kimi danışmalıdır. Bir çox pedaqoqlar bununla öz nüfuzlarını itirməkdən qorxurlar, amma bu, belə deyil. Uşaqlar onlardan qorxmayanlara, onları ciddi qəbul edənlərə və onlarla maraqlananlara hörmət edirlər. Interaktiv sinifdə uşaqlar müəllimin yaxud valideynlərin xoşuna gəlmək, ya da yaxşı qiymət almaq üçün çalışmırlar. Onlar həqiqətən təhsildə maraqlıdırlar. Interaktiv sinifdə müəllim uşaqlardan yaxşı bilik, faktiki və səhvlərin olmamasını yox, sərbəst nəticələr əldə olunması üçün yaradıcı iş tələb edir.

Uşaqların qruplara bölünməsi üçün tövsiyələr

Qrup yaxud cütlik halında görülən iş uşaqlara öz aralarında əməkdaşlıq etməyi öyrədir. Oyunun mahiyyətindən və uşaqların təcrübəsindən asılı olaraq onları könüllü, təsadüfi yaxud planlaşdırılmış qruplara bölmək olar.

Könüllü qruplarda şagirdlər özləri öz dostlarını seçərək birləşirlər, bu onları qrupda dostları ilə birgə işə yönəldir. Belə qrupların öz çatışmazlıqları vardır – dostlar tez-tez tapşırıqları unudurlar, ictimai nöqteyi-nəzərdən təcrid olunmuş şagird isə qrupdan kənar qala bilər. Üstəlik, artıq formalaşdırılmış ictimai rollar isə tez-tez qrup daxilində də saxlanılır. Məsələn, lider qrupda da həmişə lider olaraq qalır.

Təsadüfi qruplarda şagirdlər seçilmədən birləşirlər. Təsadüfi qruplara bölünmədən o zaman istifadə etmək olar ki, müəllim öz şagirdlərini o qədər də yaxşı tanımasın, onların bilik səviyyəsinə, qabiliyyətinə, sinifdəki sosial statusuna bələd olmasın. Uşaqlar bir-biriləri ilə daha yaxşı tanış olmadıqları vaxt, yəni tədris ilinin əvvəlində yaxud vaxta qənaət olunması zərurəti yarandıqda bu hallar baş verə bilər.

Şagirdləri təsadüfi qruplara bölmək üçün müxtəlif üsullardan istifadə etmək olar:

- Bir qrupda adı sayılı başlanan, digərində isə samitlə başlanan uşaqların adlarının ilk hərfinə əsasən;
- Adların ilk hərfinə əsasən əlifba sırası ilə;
- Soyadların ilk hərfinə əsasən əlifba sırası ilə;
- Adlarda yaxud soyadlarda hərflərin sayına əsasən (kimin adında az hərf varsa);
- Bu gün kim hər kəsdən erkən qalxıbsa (birinci qalxan o kəsdir ki, hamıdan tez yaxud hamıdan gec qalxır);
- Dünən yatmağa getməsi nəzərdə tutulan (birinci o kəs olur ki, yatmağa hamıdan gec gedir);
- Yaş əsasən (ay və doğum tarixinə əsasən);
- İlin vaxtlarına əsasən, uşaqların ad günlərinə əsasən;
- Ana, qardaş yaxud bacının doğum tarixinə əsasən;

- Əyləncələrə əsasən;
- Saçın uzunluğuna əsasən (zərurət yaranarsa, xətkəşdən istifadə etmək olar);
- Saçın rənginə əsasən – ən tünd rəngdən açıq rəngədək (və yaxud əksinə);
- Geyimdə olan düymələrin yaxud ciblərin sayına əsasən;
- Məktəbdən hansı uzaqlıqda yaşadığına əsasən;
- Boyuna əsasən – alçaq boydan uca boyadək;
- Ayaqqabının ölçüsünə əsasən;
- Gözün rənginə əsasən – ən açıq rəngdən, ən tünd rəngədək (və yaxud əksinə);
- Kimin ən iri həcmli şer əzbərlədiyinə, çoxtərkiibli say deməyi bacardığına əsasən;
- Uşaqlar lobyə dənəsi toplayırlar və onlarda nə qədər lobyə alındığı hesablanır. Birinci o kəs olur ki, onun topladığı lobyə dənələri çoxdur.

Təsadüfi qruplara bölünmənin öz üstünlükləri və çatışmazlıqları vardır. Məsələn, belə bir bölünmə çox vaxt aparmırsa, eyni zamanda dilin inkişafına kömək edirsə, ədalətsiz olaraq qəbul edilmirsə o zaman səmərəli hesab oluna bilər. Qeyri səmərəli bölünmə nikbin fəaliyyəti təmin etmir, şagirdlər burada heç nə əldə etmirlər.

Planşadırılmış qruplara bölünmə üçün gərgin hazırlıq tələb olunur. Müəllim uşaqları tanımalı, onların bilik səviyyəsini, qabiliyyətini və sinifdəki sosial vəziyyətini bilməlidir. Oyunun mahiyyətindən və şəraitindən asılı olaraq müəllim eyni və fərqli qrupları formalaşdırmağa bilər.

Oyunların keçirilməsinin qızıl qaydaları

İştirakçılarda oyuna marağın yaradılması və müsbət emosiyaların formalaşdırılması üçün bəzi şərtlərə əməl olunması tövsiyə edilir:

- oyunqabağı bütün lazımi materialların və vəsaitlərin olduğunu yoxlamalı;
- oyuna başlayarkən əmin olmaq lazımdır ki, bütün iştirakçılar oyunun qaydalarını və mahiyyətini düzgün başa düşür;
- oyun prosesində, xüsusilə əgər oyun yarış şəklində keçirilsə, iştirakçılar arasında taktiki və dost münasibətlərinin formalaşmasına nəzarət etməli;
- iradların və cərimələrin iştirakçıları incitməməsinə nəzarət etməli;
- əgər oyunun əvvəlində iştirakçılarda maraq və həvəs olmasa oyunu davam etdirmək lazım deyil, yaxşısı budur ki, digər bir oyun seçilsin, həmin oyun isə bir neçə vaxtdan sonra təkrar edilsin;
- Utancaq iştirakçılara icazə verilməlidir, ola bilsin onlar həmin vaxt oyuna qatılmaq istəmir, əksinə oyunun əvvəlində baxmaq və dinləmək istəyirlər;
- Oyunların ümumi quruluşuna əsasən hətta passiv şagirdlər də təcridcən fəallaşır və daha qəti qərarlar verirlər;
- Səhv edən yaxud qaydalara əməl etməyən şagirdləri oyundan çıxartmaq lazım deyil, daha yaxşısı odur ki, əlavə tapşırıqlar verilsin və ya əvəz istənilsin;

- Həmişə xüsusi tələbləri olan uşaqları qoşun – onlar üçün uyğunlaşdırılmış qaydalar düşünmək olar;
- Oyunda iştirak edən müəllim oyunun bütün qaydalarına tabe olur. O, aparıcıya yaxud digər oyunçulara “kömək etmir”;
- Müəllim yalnız elə bir məsafədən oyunu izləyə bilər ki, oyun onun köməyi olmadan davam edə bilsin, əgər oyun belə davam edə bilməsə o zaman müdaxilə edə bilər;
- Çox tez təsir etməyin, belə ki, uşaqlara düşünmək və problemi həll etmək üçün vaxt lazımdır;
- Uşaqların dediklərini heç vaxt təkrar etməyin – onlardan sakit səsle dediklərini uca və aydın səsle deməyi, həmçinin digər uşaqlardan diqqət tələb edin;
- Uşaqlara oyunları sərbəst təşkil etmək üçün vaxt verin; bütün səhvləri düzəltmək vacib deyil – uşaqların oyuna həvəsi itə bilər və şübhəsiz, tədrisin səmərəliliyi azalar;
- Uşaqlara məsələnin hazır həlli təklif olunmazdan qabaq onların özlərini problemlərin həllini tapmağa istiqamətləndirin;
- Daha çox oynayın;
- Oyunları ənənəvi tapşırıqların əvəzinə tətbiq etməyi bacarın və siz vaxta, eləcə də enerjiyə qənaət edəcəksiniz;
- Uşaqlar maraqlı və əyləncəli oyunlarda iştirak edərək məmnuniyyətlə öyrənəcəklər və siz də onlardan öyrənəcəksiniz.

Ինչպե՞ս աշխատել այս գրքով

«Սովորում ենք խաղալով: 111 խաղ բազմալեզու կրթության համար» գրքում ընդգրկված են խաղեր, որոնք կարելի է օգտագործել ինչպես ուսումնական բովանդակության յուրացման, այնպես էլ սոցիալական ունակությունների ձևավորման համար: Խաղերը դասակարգված են ութ բաժիններում՝ ըստ ուսումնական նպատակների:

1. Թիմում ծանոթություն և միաբանում.

Այս բաժնում ընդգրկված խաղերը նախատեսված են օգտագործել նոր խմբի համար, քանի որ խաղն օգնում է սովորել խաղընկերների անունները և ծանոթանալ միմյանց հետ: Առաջարկվում է օգտագործել այս խաղերը, երբ խմբում հայտնվում է նոր աշակերտ:

2. Ուշադրության կենտրոնացում և շտապ արձագանքի զարգացում

Այս բաժնի խաղերը շարժուն են: Խաղն օգնում է մասնակիցներին սովորել լինել ուշադիր, շարժուն և շտապ արձագանքել: Խաղացողները, պահպանելով խաղի հստակ կանոնները, միմյանց հաղորդում են որևէ տեղեկատվություն կամ ազդանշան: Այդ պատճառով այս խաղերը զվարճալի են և միևնույն ժամանակ պահանջում են մեծ ուշադրություն: Խաղացողները զարգացնում են լսելու ունակությունը և ուշադիր վերաբերվում միմյանց:

3. Եփման և խմբային աշխատանքի ունակության զարգացում

Այս բաժնի խաղերի նպատակն այն է, որ խաղի ժամանակ մասնակիցները համաձայնեցնեն իրենց գործողությունները, գտնեն ընդհանուր լեզու և համագործակցեն: Այս խաղերի միջոցով խաղի մասնակիցները, խաղային միջավայրում կարող են փորձել, թե ինչ է նշանակում թիմում գործելը, ինչ տեղի կունենա, երբ ինչ-որ մեկը չի օգնում, և ինչքան լավ է, երբ բոլորը մասնակցում են և պայմանավորվում: Խաղն սերմանում է իրավիճակը վերլուծելու, պայմանավորվելու և համատեղ որոշումներ ընդունելու ունակություն:

4. Մտածողության զարգացում և հանրակրթական ունակությունների ձևավորում

Այս բաժնի խաղերն օգնում են զարգացնել ընկալումը, հիշողությունը, տրամաբանական և վերլուծական մտածողությունը: Խաղերը նպաստում են երևակայության զարգացմանը և օգնում են երեխաներին կանխագուշակել ու բացահայտել իրենց ստեղծագործական ունակությունները: Այս խաղերը ընձեռում են նաև իրենց գիտելիքները ստուգելու հնարավորություններ:

5. Ունկնդրելու ունակության զարգացում

Այս բաժնի խաղերը զարգացնում են ուշադրությունը, լսելու,

համատեքստում արդեն ծանոթ բառերը գտնելու և առաջադրանքին արագ արձագանքելու ունակությունը:

6. Բառապաշարի զարգացում

Այս բաժնիի խաղերի ընթացքում մասնակիցներն օգտագործում են որոշակի բառեր: Նրանք այդ բառերը կամ արտասանում են անհրաժեշտ տեղում կամ օգտագործում են դրանք համապատասխան իրավիճակներում: Այդ պատճառով այս խաղերն առանձնապես հարմար են օգտագործել լեզվի դասավանդման ժամանակ, ինչպես նաև նոր բառերի վարժեցման կամ անցած նյութի կրկնության համար: Այս խաղերից մի քանիսը կարելի է նաև օգտագործել այն առարկաների դասավանդման ժամանակ, որտեղ մասնակիցները սովորում են նոր բառեր, օրինակ՝ բնագիտության դասերին:

7. Հաղորդակցական ունակությունների ձևավորում

Այս խաղերը մշակում են լսելու և խոսելու, միտք արտահայտելու, պատկերավոր արտահայտվելու ունակություն:

8. Տառերի ճանաչում

Այս գլխի խաղերը զարգացնում են ընկալումը, նախապատրաստում տառերի յուրացմանն ու կարդալու և գրելու ունակությունների ձևավորմանը:

Խաղերը դասակարգված են ըստ թեմայի և գործառույթի: Յուրաքանչյուր խմբում խաղերը դասակարգված են հեշտից բարդը սկզբունքով:

Գրքի յուրաքանչյուր բաժին սկսվում է խաղերի տվյալ խմբի համառոտ բացատրությամբ, որտեղ նկարագրվում են խաղերի ընդհանուր հատկանիշները, հիմնական առավելությունները և ուսումնական գործընթացում դրանց օգտագործման նպատակները:

Տարիք. Գրքում ընդգրկված են խաղեր, որոնք նախատեսված են տարրական դպրոցի երեխաների համար, երբ նոր սկսվում է լեզվի յուրացումը:

Տևողությունը. Այս հասակի երեխաների համար խաղի արդյունավետ տևողությունը 10-20 րոպե է: Այս ընթացքում երեխաները չեն կորցնում հետաքրքրությունը և չեն հոգնում:

Տեղը. Խաղերը կարելի է կազմակերպել դասարանում, դպրոցի միջանցքում, բակում, մարզադահլիճում՝ ելնելով դրանց բնույթից և տեղանքի օգտագործման հնարավորություններից:

Խաղացողների թիվը. Խաղին մասնակցում է ողջ դասարանը կամ խումբը,

որի նպատակն է յուրացնել լեզուն:

Խաղը կազմակերպելիս՝ ուսուցիչը յուրաքանչյուր աշակերտի համար ապահովում է խաղալու հնարավորություն: Եթե խաղացողների թիվը մեծ է, ուսուցիչը կարող է դասարանը բաժանել երկու խմբի և, հաշվի առնելով տեխնիկական հնարավորությունները, խաղը առաջարկել մի քանի խմբերի միաժամանակ կամ հերթականությամբ (մնացած ժամանակը լրացվում է այլ հանձնարարություններով): Բաժնի վերջում դուք կգտնեք խմբերի բաժանելու մոտեցումները:

Յուրաքանչյուր խաղի նկարագրությունը ուղեկցվում է օգտագործման մասին տեղեկատվությամբ. նպատակը, անհրաժեշտ նյութերը, խաղի նկարագրությունը, մի քանի առաջարկություններ և տարբերակներ:

Այս տեղեկատվությունը պետք է ընդունվի սուս որպես առաջարկություն, ոչ թե պարտադիր կանոն: Սա թույլ կտա ստեղծագործաբար օգտագործել խաղերը՝ ելնելով խաղացողների պահանջներից: Կարելի է ստեղծել սեփական տարբերակներ և հարմարեցնել իրավիճակները կամ պայմանները, որոնց ներքո իրականացվում են խաղերը:

Խաղեր ուսումնական գործընթացում/ուսուցման գործընթացում

1. Ինչու՞ են պետք խաղերն ուսուցման գործընթացում

Հայտնի մանկավարժներ Ժ.Պիաժեն, Ջ.Ղյուին և Լ. Վիգոտսկին¹, դեռևս անցյալ դարում ընդգծում էին խաղի կարևորությունը ոչ միայն որպես զվարճություն, այլև որպես առաջնակարգ աղբյուր, աշխարհի բնական բացահայտում և ճանաչում, ակտիվ գործունեություն, որի միջոցով երեխաները կարող են զարգացնել իրենց գիտելիքները, ըմբռնումները և երևակայական մտածողությունը: Իսկ ժամանակակից հոգեբանությունն ընդգծում է, որ ուսուցման գործընթացում խաղն իսկապես նույն մտավոր աշխատանքն է, որը երեխաներին անհրաժեշտ է աշխարհն ընկալելու և ուսումնասիրելու համար:

Պիաժեն մասնավորապես գրել է.

«Չմայած հանճարեղ մանկավարժների առաջադեմ հայացքներին՝ ըստ ավանդական մեթոդի խաղը միշտ էլ համարվել է «մտավոր» թափոն, որը երբևէ գործառական նշանակություն չի ունեցել և վնասել է երեխային՝

խանգարելով առաջադրանքների կատարմանը
(Jean Piaget: Play. dreams and imitation
in childhood. 1945/1962: 151):

Մինչ այժմ շատ դպրոցներում և մանկապարտեզներում դեռևս

*Լավ մանկավարժն
օժանդակում է
երեխաների՝
աշխարհն ինքնուրույն
ճանաչելու
հնարավորությունները*

1 Օրինակ՝ Piaget, J: Play, dreams, and imitation in childhood. New York, 1945.

Dewey, J. How we think: A restatement of the relation of reflective thinking to the educatove process. Lexington, 1933.

Dewey, J. Interest and effort in education. Edwardsville, 1913.

Dewey, J. The school and society. Chicago, 1915.

Vygotsky, L. „Play and its role in the mental development of the child. Soviet Psychology vol 12, 1966.

գերիշխում է դասերի քանակ ժամանակը «կորցնելու» վախը, և մանկավարժները հրաժարվում են խաղերի օգտագործումից՝ արդարանալով, որ ժամանակը սահմանափակ է, և ծրագրերը գերհագեցած են: Նմանօրինակ պատճառաբանությունները վկայում են այն մասին, որ ուսուցիչները չգիտեն խաղի մանկավարժական արժեքը և չեն հասկանում, թե ինչպես կարելի է այն օգտագործել և ընդգրկել ուսուցման գործընթացի մեջ:

Մակայն, միևնույն ժամանակ, մենք չենք առաջարկում երեխաներին առանց որևէ վերահսկողության պարզապես խաղալու հնարավորություն տալ: Այն մանկավարժները, որոնք առաջարկում են երեխաներին տալ լիիրավ ազատություն և պարզապես խաղալու հնարավորություն, (այսպես կոչված մատուրատիոնիստներ²) ճիշտ չեն մեկնաբանում այն առավելությունները, որոնք ունի խաղն ուսուցման համար:

Չէ՞ որ հնարավոր չէ, որ երեխաները գրագետ դառնան միայն խաղալիքներով խաղալիս, առանց խաղի մեջ որևէ տեղեկատվություն մտցնելու: Նման մոտեցումը հաշվի չի առնում այն փաստը, որ ուսուցման գործընթացը պահանջում է այդ գործընթացի բոլոր մասնակիցների գործողությունների պլանավորում և կառավարում: Արդյունավետ դասավանդման արվեստը լիարժեք կառավարման (որն առաջարկում է ավանդական մեթոդը) և մատուրատիոնիստների լիիրավ ազատության միջև ոսկե միջին գտնելն է:

խաղի միջոցով կարելի է սովորեցնել այն, ինչը չի կարելի որևէ այլ մեթոդով

Մոտեցումը, որը թույլ է տալիս երեխաներին ինքնուրույն բացահայտել աշխարհը և միաժամանակ աջակցում է մանկավարժներին կառավարել ուսումնական գործընթացը, պատկանում է կառուցողականության (կոնստրուկտիվիզմի) փիլիսոփայությանը: Այն արտացոլվում է «նոր մեթոդի» մեջ տարբեր անվանումներով՝ փոխներգործուն (ինտերակտիվ), հաղորդակցական (կոմունիկատիվ) կամ երեխայակենտրոն: Ըստ նոր մեթոդի խաղն ունի իր ինտեգրատիվ տեղն ուսուցման գործընթացում և նախատեսված է ոչ միայն նախադպրոցական հասակի կամ տարրական դասարանների երեխաների համար, այլ նաև բոլոր տարիքի սովորողների համար:

Խաղը զարգացնում է ճանաչողական, սոցիալական, զգացմունքային, ստեղծագործական և ֆիզիկական ունակություններ: Խաղի միջոցով երեխաները ժամանակին սովորում են շփվել, ընդունել որոշումներ, պահպանել որոշակի կանոններ, վերահսկել իրենց, համագործակցել, հաշվի առնել մյուսների կարծիքը, ուշադրություն դարձնել նրանց պահանջների և հարգել նրանց,

կենտրոնանալ և սկսած գործը հասցնել ավարտին: Այսօր շատ կարևոր է ունենալ այս ընդունակությունները, որոնք կարելի է ձեռք բերել խաղի միջոցով, քանի որ խաղերում ոչ միայն խոսվում է այդ արժեքների մասին, այլ նաև տեղի է ունենում դրանց գործնական կիրառումը:

2 Այդ բառը (maturationists) օգտագործում են Կոլբերգը և Մայերը և նշանակում է պատկերացում այն մասին, որ երեխան ամեն ինչ սովորում է ազատ խաղի ժամանակ, առանց ուսուցչի կամ ծնողների կառավարման: (Kohlberg, Mayer. ., Development as the Aim of Education., 1972)

*Խաղը
ժամանակի
կորուստ չէ,
այլ ընդհակա-
ռակը, ուսուց-
ման ամենա-
արդյունավետ
մեթոդն է*

*Կարելի է սովորել
հարցեր տալով,
վերլուծելով,
սխալվելով
և ինքնուրույն
ուղղելով
սխալները*

Խաղերի ճիշտ կազմակերպումն ուսումնական բովանդակության յուրացման ոչ պակաս կարևոր գործոնն է: Խաղերի ընդգրկումը ուսումնական գործընթացում ապահովում է երեխաների առավելագույն ակտիվություն, քանի որ խաղը երեխայի վարքի բնական ձևն է: Խաղը հնարավորություն է տալիս ուսուցանվող բովանդակությունը մատուցել մատչելի և հասանելի ձևով: Դասապրոցեսում ընդգրկված խաղերը հիմնականում տարբերվում են այն խաղերից, որոնց երեխան արդեն ծանոթ է և սովոր:

Դասերի ժամանակ խաղերում նվազում են ազատ շարժումները և ավելանում է մտավոր ծանրաբեռնվածությունը: Միաժամանակ խաղի հիմնական հատկանիշները չեն կորչում. պահպանվում է նրա էությունը և համագործակցության ոգին: Խաղերն օգնում են նորովի գիտակցել յուրացրածն ու տալիս են կանոնավոր կրկնության և անցած նյութն ամրապնդելու հնարավորություն:

Չեռնարկում ընդգրկված խաղերը նախատեսված են երեխայի խոսքի ունակության զարգացման համար և հիմնված են նրա հետաքրքրությունների վրա. խաղերը համապատասխանում են երեխաների զարգացման մակարդակին:

Հաշվի առնելով խաղի վերոհիշյալ առավելությունները՝ պարզ է դառնում, որ դասի ժամանակ խաղի համար ծախսված ժամանակը կորած ժամանակ չէ, այլ ընդհակառակը, խաղերի օգնությամբ կարելի է

2. Ի՞նչ է նշանակում փոխներգործուն, հաղորդակցական մեթոդ

Դասավանդման փոխներգործուն մեթոդը հիմնված է ուսուցման կառուցողական հոգեբանության վրա: Դա նշանակում է, որ ըստ այս մեթոդի գիտելիքները և ունակությունները յուրացվում են ոչ այնքան ուսուցչից աշակերտին պատրաստի տեղեկատվության փոխանցման միջոցով, որքան «գիտելիքների անհատական ձևավորման» միջոցով: Յուրաքանչյուր մարդ իր գիտելիքները «ձևավորում է» տեղեկատվության միջոցով, որն ինքն անձամբ հավաքում է տարբեր աղբյուրներից, ինչպես նաև անձնական փորձից: Այդպիսի ակտիվ և ինքնուրույն ուսումնառությունը գիտելիքը դարձնում է գիտակցված, և մասնակիցը (աշակերտը) ոչ թե պարզապես գիտի, այլ ըմբռնում է առարկաների էությունը: Նա ավելի լավ կիշի նոր տեղեկատվությունը և կկարողանա ստացած գիտելիքները օգտագործել դպրոցից դուրս այլ վայրերում և իրավիճակներում:

Այսինքն, որքան շատ աշակերտն ինքնուրույն ընդգրկվում է ուսումնառության գործընթացում, այնքան լավ արդյունք է ստանում:

Ապացուցված է, որ մենք հիշում ենք՝

20% այն ամենից, ինչ մենք լսում ենք

30% այն ամենից, ինչ տեսնում ենք

80 % այն ամենից, ինչ ինքներս փորձում և ձևավորում ենք

90 % այն ամենից, ինչ ինքներս կատարում և հայտնաբերում ենք:

Գործնականում դա նշանակում է, որ աշակերտները ուսումնական

գործընթացի բոլոր մակարդակներում գլխավոր դեր են կատարում. ուսուցիչը հաշվի է առնում նրանց պահանջներն ու հետաքրքրությունները՝ թեմայի և աշխատանքի տեսակի ընտրությունը կատարելիս:

Իսկ ծրագիրն օգտագործվում է ոչ թե որպես պարտադիր պայման, այլ որպես կողմնորոշիչ, այսինքն՝ պլան, որը հարմարեցվում է երեխաներին (ի տարբերություն ավանդական մեթոդի, որտեղ երեխաներն են հարմարվում պլանին): Այդպիսով, դասերին կարելի է ավելացնել արդիական թեմաներ, որոնք ծրագրով նախատեսված չեն, սակայն տվյալ պահին կարևոր են երեխաների համար: Փոխներգործուն մեթոդը թույլ է տալիս առավել արդյունավետ սովորել գործունեության տարբեր տեսակների միջոցով: Երեխաները ոչ միայն լսում են ուսուցչին և օգտվում նյութերից, այլ, որ ամենագլխավորն է, հարցեր են տալիս, փորձում են լուծել հիմնախնդիրներ, սխալվում են, վերլուծում են, ուղղում են իրենց սխալները, բացատրում են իրենց եզրակացությունները ընկերներին և շփվում միմյանց հետ: Ուսուցիչն աշակերտներին տալիս է հանձնարարություն, որի վրա աշխատելիս՝ նրանք կարող են օգտագործել այն, ինչ Ջոն Դյուին (“The Schoon and Society” 1915: 40-56) անվանել է «չորս խթաններ», որոնք կան յուրաքանչյուր երեխայի մեջ. դրանք են՝ շփվելու ցանկություն, հայտնաբերելու/բացահայտելու ցանկություն, կառուցելու ցանկություն և զեղարվեստական ինքնաարտահայտման ցանկություն (ոչ միայն խոսելով, այլև այլ միջոցներով, օրինակ՝ պարելով, նկարելով կամ թատրոն խաղալով):

Աշխատելով փոխներգործուն մեթոդով՝ ուսուցիչը մշակում է երեխաների ինքնուրույն գործելու ձևեր, վստահում է նրանց, և հավատում, որ նրանք կարող են դրանք իրականացնել:

Դրա համար ամենագլխավորն այն է, որ ուսուցիչը հավատա, որ երեխաները կարող են ինչ-որ բան անել, և նրանց ընձեռի ենթախմբերում ինքնուրույն աշխատելու հնարավորություն առանց վերահսկողության: Դա երեխաների մոտ վաղ հասակից զարգացնում է ինքնուրույնություն և պատասխանատվություն իր և մյուսների հանդեպ:

Դասարանում, որն աշխատում է փոխներգործուն մեթոդով, կարևորն այն չէ, թե երեխաները ճիշտ են կատարում հանձնարարությունը, այլ այն, որ արդյո՞ք նրանք խնդիրների լուծման համար որոնում են իրենց սեփական ուղիները և կարող են արդյո՞ք քննարկել հիմնախնդիրները և առաջարկվող ուղիների առավելությունները: Այդպիսի դասարանում երեխաները պարտավոր են միմյանց հետ ավելի շատ շփվել, ինչը նաև նպաստում է նրանց շփվելու ունակության զարգացմանը:

Այս ամենը թվում է բարդ, բայց իրականում ուսուցչի համար դա դժվար է միայն հոգեբանական տեսակետից, քանի որ նա սովոր չէ երեխաների վրա այսքան պատասխանատվություն դնել: Ուսուցիչը երբ սկսի աշխատել այսպես, նա կտեսնի, որ երեխաներն աշխատում են հաճույքով, իսկ իրեն ավելի հետաքրքիր կդառնա դասավանդումը: Ուսուցիչը կտեսնի, որ ինքն էլ երեխաներից կարող է սովորել:

Փոխներգործուն խաղն իր մեջ միավորում է փոխներգործուն գործունեության բոլոր պահանջները և ինչպես երեխաներին, այնպես էլ ուսուցիչներին սովորեցնում է նոր մոտեցում ուսուցման և ուսումնառության գործընթացին: Իրականում դրանում նոր ոչինչ չկա: Նորը միայն այս խաղերի օգտագործումն է որպես ուսուցման փոխներգործուն մաս այս կամ

այն գիտելիքի յուրացման և ունակության զարգացման գործընթացում:

3. Ի՞նչ է փոխներգործուն խաղը

Փոխներգործուն խաղի ժամանակ խաղացողները միմյանց հետ որոշակի փոխհարաբերությունների մեջ են մտնում: Այդ պատճառով ոչ փոխներգործուն խաղերն այն խաղերն են, որտեղ կա մեկ խաղացող կամ էլ ներկայացման այն փոքրիկ դրվագներն են, որտեղ խաղացողները կատարում են նախօրոք որոշված շարժումներ և երկխոսություններ: Փոխներգործուն խաղերն ունեն հետևյալ հատկանիշները.

- հետաքրքիր են և, լինելով այդպիսին, երեխաներին ակտիվացնում են՝ գրավելով նրանց ուշադրությունը և մասնակցությունը,
- ունեն պարզ և հասկանալի կանոններ,
- ունեն որոշակի նպատակներ, այսինքն՝ ուսուցիչը նպատակաուղղված օգտագործում է խաղը դասի ժամանակ ,
- խաղի ընթացքում մասնակիցներն ունեն ընտրության հնարավորություն, այսինքն՝ յուրաքանչյուր խաղացող իր որոշումներով ազդում է խաղի ընթացքի վրա,
- խաղացողները խաղի միջոցով կարող են ինչ-որ բան սովորել,
- * խաղերը պարունակում են մրցակցություն,
- * խաղերը պարունակում են շարժունություն:

Առաջին հինգ հատկանիշները պարտադիր են փոխներգործուն խաղի համար, իսկ * նշանով հատկանիշները կարող են ձևավորվել: Կան փոխներգործուն շատ խաղեր, որտեղ ոչ ոք չի հաղթում և ոչ էլ պարտվում է: Կան նաև այնպիսի խաղեր, որտեղ, առաջին հայացքից, թվում է, որ ոչինչ չի կարելի սովորել, բայց նրանք հետաքրքիր են և արժե դրանք խաղալ: Հատկապես այս խաղերով ամենից հաճախ կարելի է ձևավորել սոցիալական և զգացմունքային ունակություններ:

Մրցակցությունը, շարժունությունը և ինչ-որ բան սովորելու հնարավորությունը շահագրգռում են երեխաներին և ապահովում նրանց ակտիվ մասնակցությունը: Հատկապես երեքից ինը տարեկան երեխաների համար շարժունությունը վճռորոշ գործոն է ինչպես նրանց ուշադրությունը գրավելու, այնպես էլ առողջ զարգացման համար: Մրցակցությունն առանձնապես հետաքրքիր է վեցից տասներեք տարեկան երեխաների համար: Տասներեք տարեկանից հետո այդ գործոնը դառնում է քիչ կարևոր: Ինը և ավելի տարեկան երեխաների համար մեծ նշանակություն ունի այն, որ խաղալով կարելի է ինչ-որ նոր բան իմանալ կամ ինչ-որ բան սովորել:

4. Ի՞նչ կարելի է սովորել խաղի միջոցով

Փոխներգործուն խաղը սովորելու արդյունավետ միջոց է, քանի որ խաղի միջոցով միաժամանակ կարելի է հասնել տարբեր նպատակների: Խաղերը վերականգնում, խորացնում, արդիականացնում և ամրապնդում են լեզվական

ունակությունները և գիտելիքները, հարստացնում են բառապաշարը, մարզում հիշողությունը, նպաստում ուշադրության և տրամաբանական մտածողության զարգացմանը: Երաժշտության և երգերի ուղեկցությամբ խաղերը նպաստում են նաև լեզվի ինտոնացիայի յուրացմանը և խոսքի զարգացմանը:

Նման խաղերի նպատակը «քովանդակային են», քանի որ դրանց միջոցով երեխաներն խորացնում են իրենց գիտելիքները: Նոր բառերի արտասանությանն ուղղված պարզ վարժությունները (առաջին, երկրորդ կամ օտար լեզվով) առանձնահատուկ հետաքրքրություն չեն առաջացնում: Իսկ եթե բառերը վարժեցվում են խաղի միջոցով, ապա երեխաները հանձնարարությունը կատարում են մեծ բավականությամբ, որովհետև բառի օգտագործումը անմիջականորեն կապվում է խաղի հետ, իսկ արտասանությունը խաղի քայլերից մեկն է: Նման դեպքում երեխաները կարող են սովորել առանց վախի զգացումի, այն է՝ իրենք «պետք է» իմանան այդ բառերը, այլապես կստանան վատ գնահատական:

Քանի որ խաղն արդեն շփում է, բնականաբար, երեխաները խաղի միջոցով սովորում են շփվել, հաղորդակցվել և պահպանել քաղաքավարության և հարգանքի կանոնները: Խաղի ընթացքում երեխաներն աննկատ ձեռք են բերում սոցիալական և զգացմունքային ունակություններ, որոնք կարևոր են նրանց զարգացման և ժամանակակից հասարակությունում ինքնուրույն և պատասխանատու կյանքի նախապատրաստության համար: Նրանք սովորում են պահպանել որոշակի կանոններ, հաշվի նստել այլ մարդկանց հետ, ուշադրություն դարձնել նրանց պահանջներին և հարգել դրանք, կենտրոնանալ և սկսած գործը հասցնել ավարտին, լինել վճռական, կարողանալ վերահսկել իրենք իրենց, համագործակցել, և այլն:

Այս ամենը կարելի է ձեռք բերել խաղի միջոցով, եթե խաղի ժամանակ ուսուցչի հարաբերությունը երեխաների հետ հիմնված է գործընկերության վրա:

5. Ինչպե՞ս բոլոր երեխաներին ներգրավել խաղի մեջ

Խաղը գործունեություն է և ակտիվություն: Հաշվի առնելով այն փաստը, որ խաղը երեխաների գլխավոր գործունեությունն է, պետք է նշել խաղի ճիշտ կազմակերպման կարևորությունն ու անհրաժեշտությունը երեխաների զարգացման համար: Քանի որ հենց այս գործունեության միջոցով են երեխաները սովորում այն, ինչ նրանց հարկավոր է առողջ զարգացման համար, շատ կարևոր է, որ յուրաքանչյուր երեխա մասնակցի խաղին՝ անկախ նրա ընդունակություններից կամ հետաքրքրություններից: Ուսուցչի դերն այն է, որ նա ստեղծագործաբար հարմարեցնի խաղի պայմանները կամ կանոնները. նա կարող է նույնիսկ սահմանել առանձնահատուկ կանոններ առանձին երեխայի կամ երեխաների համար, որպեսզի խաղը հետաքրքրի բոլորին և յուրաքանչյուրն ունենա խաղին մասնակցելու հնարավորություն:

Երեխաների մեծ մասի համար խաղի ընթացքում փոխգործունեությունը կարող է հանդիսանալ նրանց նորմալ աճի և զարգացման հիմնական

Դասերի ժամանակ
աշխատում են
աշակերտները,
իսկ ուսուցիչը
կազմակերպում,
աջակցում,
շահագրգռում,
վերահսկում և
գնահատում է:

պայմանը: Մակայն դա դրական արդյունք է տալիս միայն այն դեպքում, եթե երեխաներն իսկապես սերտ համագործակցում են: Տարբեր կարիքների և հնարավորությունների երեխաների փոխգործունեությունն օգտակար է բոլորին, քանի որ նրանց զարգացմանը զուգընթաց մշակվում են այնպիսի կարևոր հատկանիշներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը և հարգանքն այն երեխաների նկատմամբ, ովքեր իրենցից տարբերվում են (ընդունակություններով, հնարավորություններով, բնավորությամբ, լեզվով, հետաքրքրություններով, և այլն): Այդ պատճառով խաղերի անցկացման ժամանակ անհրաժեշտ է ընդգրկել նաև տարբեր ընդունակությունների և հնարավորությունների տեր երեխաներ: Կան երեխաներ, որոնք չեն կարող խաղալ շատ ակտիվ խաղեր: Այդ իսկ պատճառով նրանց համար կարելի է կազմակերպել կամ ընտրել այնպիսի խաղեր, որտեղ կարելի է խաղալ նստած կամ, խաղեր, որոնք քիչ լարվածություն են պահանջում: Տեսողության խնդիրներ ունեցող երեխաների համար, օրինակ՝ գնդակով խաղի ժամանակ կարելի է զանգակ դնել գնդակի մեջ, որպեսզի նրանք կարողանան լսել, թե ուր և ինչպես է շարժվում գնդակը: Խմբում, որտեղ կան լսողության խնդիրներ ունեցող երեխաներ, խաղի երաժշտական ուղեկցությունը կարելի է լրացնել ռիթմիկ ծափերով: Որպեսզի խաղի մեջ ընդգրկվեն այն երեխաները, որոնք դեռևս լավ չեն տիրապետում այս կամ այն լեզվին, խաղի ընթացքում անհրաժեշտ է օգտագործել նկարներ, կատարել տարբեր շարժումներ, ինչպես նաև նկարչությունն օգտագործել որպես միջոց: Որպեսզի երեխաները խաղի միջոցով արագ սովորեն երկրորդ կամ օտար լեզուն, չի կարելի այն, ինչ նրանց համար նոր է և անձանոթ թարգմանել մայրենի լեզվով:

Այդպիսով, բոլոր երեխաները, առանց բացառության, կունենան խաղին ակտիվորեն և հավասար մասնակցելու հնարավորություն և կսովորեն այն, ինչ իրենց է հարկավոր:

6. Ուսուցչի դերը

Որպեսզի երեխաները կարողանան որևէ նոր բան սովորել և դասավանդվող առարկայի նկատմամբ որոշակի վերաբերմունք ձևավորել, անհրաժեշտ է դասարանում ապահովել որոշակի մթնոլորտ: Մթնոլորտ, որտեղ տվյալ առաջադրանքի կամ տվյալ խաղի շրջանակներում երեխաներն իրենց գգում են ազատ, որտեղ նրանք ունեն հնարավորություն փորձելու, սխալվելու և լուծման ինքնուրույն ուղիներ որոնելու համար: Որոնումների նման գործընթացը պահանջում է մեծ ուշադրություն: Մակայն ուսուցչից չի պահանջվում առանձին ժամանակ հատկացնել դասի նյութն ամրապնդելու համար: Տվյալ մեթոդն աշակերտին հնարավորություն է տալիս տրված առաջադրանքը յուրովի կատարել և ուսուցչի կամ այլ աշակերտների կողմից ստանալ անհատական աջակցություն:

Ավանդական դասարանում ուսուցիչը գիտելիքի միակ աղբյուրն է, որի խնդիրն է հնարավորության սահմաններում երեխաներին արագ

հաղորդել գիտելիքներ: Փոխներգործուն դասարանում ուսուցիչը դառնում է երեխաների գործունեության կազմակերպիչը, իսկ երեխաները գիտելիքներ ստանում են տարբեր աղբյուրներից (օրինակ՝ այլ երեխաների, այլ մարդկանց, հարցազրույցների, տեքստերի, ինքնուրույն բացահայտումների և այլ միջոցներով):

Ուսուցիչ-կազմակերպչի հիմնական աշխատանքը դասերի նախապատրաստությունն է: Նա մշակում է գործունեության տարբեր ձևեր, առաջադրանքներ և խաղեր, որոնց միջոցով կարելի է հասնել տվյալ դասարանի համար նախատեսված նպատակին: Ուսուցիչը մտածում է այն մասին, թե դասի ժամանակ որ երեխան, երբ և ինչով է զբաղվելու, որպեսզի նրանք բոլորը լինեն զբաղված և, որպեսզի ինքը հասցնի օգնել նրանց, ովքեր դժվարությամբ են սովորում կամ էլ ինչ-որ ձևով օգնել առավել դժվար առաջադրանքների կատարման հարցում: Ուսուցիչը նախօրոք պլանավորում է, թե դասի ժամանակ երեխաներից ով կարող է դառնալ իր օգնականը: Որպես կանոն, օգնական են ընտրվում այն երեխաները, ովքեր մյուսներից արագ են ընկալում, ըմբռնում և աշխատում, կամ էլ նրանք, ովքեր լավ գիտեն դասավանդման լեզուն: Դասի ժամանակ ուսուցիչը միայն կազմակերպում է երեխաներին, նրանց խորհուրդներ է տալիս, թե ինչ, ինչպես, երբ և ում հետ կարելի է անել, և օգնում է միայն այն ժամանակ, երբ դժվարություններ են առաջանում:

Ավանդական մեթոդից աշխատանքի փոխներգործուն տեսակին անցնելու դժվարությունն այն է, որ ուսուցիչը պետք է փոխի իր վերաբերմունքը երեխաների նկատմամբ: Նա պետք է նրանց շահագրգռի ուսման նկատմամբ՝ նրանց մեջ հետաքրքրություն առաջացնելու ճանապարհով: Դրա համար նա պետք է աշակերտներին լուրջ վերաբերվի, լսի նրանց և խոսի նրանց հետ ինչպես մեծերի հետ: Շատ ուսուցիչներ վախենում են արդյունքում կորցնել իրենց հեղինակությունը, բայց դա այդպես չէ: Երեխաները հարգում են նրան, ումից չեն վախենում, ով իրենց լուրջ է վերաբերվում և հետաքրքրվում է իրենցով: Փոխներգործուն դասարանում երեխաները սովորում են ոչ թե ուսուցչի և ծնողների հավանությանն արժանանալու կամ լավ գնահատական ստանալու համար, այլ ուսման նկատմամբ հետաքրքրված լինելու համար: Փոխներգործուն դասարանում ուսուցիչն երեխաներից պահանջում է ոչ թե փաստի լավ իմացություն և սխալների բացակայություն, այլ կենտրոնացած և ստեղծագործ աշխատանք, որը կօգնի նրանց ինքնուրույն հասնելու արդյունքների:

Առաջարկություններ երեխաներին խմբերի բաժանելու համար Խմբային կամ զույգերով աշխատանքն օգնում է երեխաներին սովորեցնել համագործակցել: Խաղի բովանդակությունից և երեխաների փորձից ելնելով՝ նրանց կարելի է բաժանել կամավոր, պատահական կամ պլանավորված խմբերի:

Կամավոր խմբերում աշակերտներն իրենք են համախմբվում՝ հաճախ ընտրելով իրենց ընկերներին. ընկերների հետ խմբում աշխատելը

շահագրգռում է նրանց: Այսպիսի խմբերն ունեն իրենց թերությունները. ընկերները հաճախ մոռանում են առաջադրանքի մասին, իսկ սոցիալապես մեկուսացված աշակերտը կարող է հայտնվել խմբից դուրս: Միաժամանակ արդեն ձևավորված սոցիալական դերերը հաճախ պահպանվում են նաև խմբի ներսում, օրինակ՝ առաջնորդը (լիդերը) խմբում էլ է դառնում առաջնորդ:

